

մալը հին Կափարզամաղան է ստուգութեան մօտ հաւանականութեամբ:

Այժմ մեր պարտքն է անցեալ դարերու անփութութիւնը և մոռացումը դարմանել, և վերականգնել այնչափ երկար ժամանակ մոռցուած սրբավայրը: Գմբէթներով, մայր եկեղեցիներով եւ մատուռներով կը պատուեն նախաձկան հոն ուր անձնապէս չէր ապրած: Անոր գերեզմանը արժանի չէ՞ աւելի մեծ պատիւի մը:

Կափարզամաղան՝ Ս. Ստեփանոսի և Գամաղիէլի ժամանակ քրիստոնեաներու ապաստանարան էր. մեր օրերուն ալ ան քրիստոնէական ուխտիս մըն է (T. S. E. էջ 1-32):

Ռեմլին հին Արիմաթիան է, հայրենիքը Յովսէփին որ մեր Տիրոջ թաղումը կատարեց իւրապատու գերեզմանին մէջ(*): Ռեմլէն իսլամ պետութեան ժամանակ կը բովանդակէր բազմաթիւ քրիստոնեաներ,

(*) Գիտնցներ կը հերքեն Ռէմլէի նոյնացումը Արիմաթիայի հետ. անոնց ըսածին նայելով հին յիշատակարանները ցայց կուտան տեղ մը աւելի Լիւզի հիւսիսային արեւելք կամ արեւելք քան թէ հարաւ: Բաց աստի, կ'ըսեն թէ 1. — Ռէմլէի Արիմաթիայի աւանդութիւնը թ. դարու ծագում ունի. աւելի հին ուխտաւորներ առանց անոր վրայ խօսելու, կը յիշեն տոյակայ բաղաններ: 2. — Ռէմլէն հին Բաղաֆի մը չէ յայտնաբերած, այլ ըստ արաբ աշխարհագիրներու, Ը. դարուն հիմնուած է Ալպսէլ Մէլէֆի որդւոյն Սիւլէյմանէն. Ռաման եւ Ռէմլէ բառերը ստուգաբանօրէն բոլորովին տարբեր են. Ռէմլէն կը նշանակէ աւազ եւ Ռաման բարձրութիւն...: Ս. Երկրի Խաչակիրներուն համար պաշտօնական յիշատակարան մը կը վկայէ թէ Rentis Արիմաթիան էր, Յովսէփի հայրենիքը: Assises de Jérusalem ի մէկ գլուխին մէջ կը կարդացուի. «Լիւզի Ս. Գեորգի ֆորեպիսկոպոսները որո՞նք են. — Արիմաթիայի Ս. Յովսէփի աբբան, որ հիմակ Rentis կը կոչուի» (Հ. Վ. Ե. էջ 318 - 319):